© 2023 | Զեկույցը հրապարակվել է «Խաղաղության երկխոսություն» հկ-ի կողմից:

Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Վանաձոր, 2002, Մյասնիկյան 12, Բն. 40

Հեռ.՝ +374 (322) 21340;
Բջջ.՝ +374 (55) 820 632; (93) 820 632

Էլ. Փոստ՝ ekhachatryan@peacedialogue.am; mailbox@peacedialogue.am

URL: https://www.peacedialogue.am
https://safesoldiers.am/

Խմբագրական թիմ՝

Էդգար Խաչատրյան
Մարիաննա Խաժակյան
Անուշ Հարությունյան
Աննա Զուրաբյան
Արևիկ Գաբրիելյան

«Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության տարեկան հաշվետվություն | 2021-2022

ՎԱՆԱՁՈՐ, 2023

«Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության տարեկան հաշվետվություն | 2021-2022

ՎԱՆԱՁՈՐ, 2023

«Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության տարեկան հաշվետվություն | 2021-2022

ՎԱՆԱՁՈՐ, 2023

© 2023թ. / Հաշվետվությունը հրապարակվել է
«Խաղաղության Երկխոսություն» հկ-ի կողմից:

Հաշվետվությունը հրատարկվել է «Սիգրիդ Ռաուզինգ
Թրասթ» հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ:

Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, ք.
Վանաձոր, 2002, Մյասնիկյան 12, բն.40
Հեռ.՝ +374 (322) 21340
Բջջ.՝ +374 (55) 820 632; (93) 820 632
Էլ. Փոստ՝ ekhachatryan@peacedialogue.am;
mailbox@peacedialogue.am
URL: https://www.peacedialogue.am;
http://www.safesoldiers.am:

Խմբագրական թիմ՝

Էդգար Խաչատրյան
Մարիաննա Խաժակյան
Անուշ Հարությունյան
Աննա Զուրաբյան
Արևիկ Գաբրիելյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔ

Խաղաղության, ժողովրդավարության և մարդու իրավունքների անխզելի կապերի հաստատում նոր ձևավորվող անվտանգային ճարտարապետության կերտման ճանապարհին 4

Թեմատիկ ուղղվածություններ/
Ներգրավվածության մակարդակները 8
Տեսլականը/Առաքելությունը/Մեթոդները 9
2021-2022թթ. ռազմավարական նպատակները 10
«Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության 2021-2022թթ. ծրագրերը 11
2021-2022թթ. ծրագրերի արդյունքները 12
«Խաղաղության Երկխոսություն» հկ-ի 2021-2022թթ. հովանավորները և գործընկերները 13

ՀԱԿԻՐՃ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ 2021-2022ԹԹ. ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

Մարդու իրավունքների և ժողովրդավարական արժեքների նկատմամբ հարգանքի ամրապնդում 14
Խաղաղության շարժման ձևավորման և խաղաղության մշակույթի տարածման խթանում 17
Տեղական համայնքների ներգրավում և հզորացում 20

2021-2022ԹԹ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Խաղաղության երկխոսություն» հկ-ի ֆինանսական իրավիճակը 2021թ. դրությամբ 23
«Խաղաղության երկխոսություն» հկ-ի ֆինանսական իրավիճակը 2022թ. դրությամբ 24

2021-2022թթ. «Խաղաղության երկխոսություն» հկ-ի թիմը 25

ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔ

Խաղաղության, ժողովրդավարության եւ մարդու իրավունքների անխզելի կապերի հաստատում նոր ձեւավորվող անվտանգային ճարտարապետության կերտման ճանապարհին

Էդգար Խաչատրյան
«Խաղաղության երկխոսություն» հկ, նախագահ

Հնարավոր չէ հաստատել հարատև խաղաղություն առանց հակամարտության գոտում անվտանգ միջավայրի ձևավորման, ինչպես՝ հնարավոր չէ ստեղծել անվտանգ միջավայր առանց մարդկային արժանապատվության և մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի: Հազարավոր կյանքեր խլած, ճակատագրեր խեղած և պարբերաբար թեժացող հակամարտության գոտում մեր գործունեությունն իրականացնելիս՝ «Խաղաղության երկխոսությունում» մենք, կարծես մանտրա, շարունակաբար կրկնում ենք այս ուղերձները փոփոխվող աշխարհում մեր առաքելությամբ նախանշված հետագծին հավատարիմ մնալու համար:

2020թ. սեպտեմբերին Հարավային Կովկասում բռնկվեց լայնածավալ 44-օրյա պատերազմ ադրբեջանական և հայկական զինված ուժերի միջև: Լեռնային Ղարաբաղի հակամարտության շուրջ ծագած հայ-ադրբեջանական առաջին պատերազմի ավարտին՝ 1994թ.-ին կնքված հրադադարից ի վեր ուժգնությամբ իր նախադեպը չունեցող արյունալի մարտերի արդյունքում կողմերը կրեցին հազարավոր մարդկային կորուստներ: Ադրբեջանի կողմից նախաձեռնված այս պատերազմի հետևանքով զոհվեց հարյուրից ավել խաղաղ բնակիչ (ներառյալ երեխաներ), իսկ հարյուրավոր զինծառայողներ և քաղաքացիական անձինք մինչ օրս անհետ կորած կամ գերեվարված են:

2020թ. նոյեմբերին կնքված հրադադարը ցավալիորեն վերջ չդրեց հակամարտությանը և դրանով պայմանավորված մարտական գործողություններին: Չնայած հրադադարի համաձայնագրով ստանձնված պարտավորություններին՝ կողմերի միջև փոխհրաձգությունները չդադարեցին նաև 2021թ.-ին: Բացի այդ, Լեռնային Ղարաբաղում ադրբեջանական զորքերի կողմից իրականացվեցին տարածքային առաջխաղացումներ մի քանի ուղղությամբ, որոնք զուգորդվեցին նոր մարդկային կորուստներով և գերեվարումներով: Արդեն 2022թ. սեպտեմբերին Ադրբեջանի զորքերը ներթափանցեցին Հայաստանի Հանրապետության տարածք՝ թիրախավորելով սահմանային մարզերում գտնվող քաղաքացիական ենթակառուցվածքները: 2022թ. դեկտեմբերին Ադրբեջանի կողմից փակվեց նաև Հայաստանը Լեռնային Ղարաբաղի հետ կապող միակ՝ Լաչինի միջանցքը, որը 2020թ.-ին Հայաստանի, Ադրբեջանի և Ռուսաստանի միջև կնքված եռակողմ հայտարարությունից ելնելով, գտնվում էր ռուսական խաղաղապահ առաքելության փաստացի վերահսկողության գոտում: Այս գործողության հետևանքով հազարավոր մարդիկ հայտնվեցին պատանդի կարգավիճակում. բազմաթիվ ընտանիքներ ակամա բաժանվեցին՝ հայտնվելով շրջափակման տարբեր կողմերում, առողջական ծանր խնդիրներ ունեցող քաղաքացիներ զրկվեցին դեղորայքից և առողջապահական ծառայություններից, խափանվեց պարենի և առաջնային անհրաժեշտության այլ ապրանքների

... Աշխարհաքաղաքական նման զարգացումները շատերի մոտ հաստատեցին տարածված «ուժն է ծնում իրավունք» պատկերացումը. մոտեցում, որը լեգիտիմացնում է բռնության անխուսափելիությունն ու ուժեղագույնի «իրավունքը» և կասկածի տակ առնում խաղաղ ճանապարհով հակամարտությունների կարգավորման այլընտրանք չունենալու գաղափարը...

մատակարարումը Լեռնային Ղարաբաղի բնակչությանը:

2022թ.-ին ամբողջ աշխարհը ցնցեց մեկ այլ իրադարձություն. փետրվարի 24-ին տեղի ունեցավ Ռուսաստանի ներխուժումն Ուկրաինա: Մինչ այժմ շարունակվող այս պատերազմն արդեն խլել է տասնյակ հազարավոր զինվորականների կյանքեր: Ըստ Միացյալ Ազգերի Կազմակերպության և միջազգային հեղինակավոր իրավապաշտպան կազմակերպությունների՝ ներխուժման սկզբից ի վեր Ուկրաինայում զոհվել է առնվազն 6,755 և վիրավորվել առնվազն 10,607 խաղաղ բնակիչ:

Ենթադրելի է, որ իրական կորուստները շատ ավելի մեծ են, քանի որ ռուսական զորքերը շարունակաբար անկանոն հրթիռային հարվածներ են հասցնում Ուկրաինայի բնակելի տարածքներին,

հիվանդանոցներին և այլ քաղաքացիական ենթակառուցվածքներին:

Վերոնշյալ երկու իրադարձությունները, անկասկած, նշանակալից ազդեցություն ունեցան ոչ միայն Լեռնային Ղարաբաղի հակամարտության մեջ ներգրավված հասարակությունների (տարածաշրջան, որտեղ գործունեություն է ծավալում «Խաղաղության երկխոսությունը»), այլ և, լայն իմաստով, ամբողջ աշխարհի՝ անվտանգային ճարտարապետության վերաբերյալ ընկալումների և մոտեցումների փոխակերպման վրա: Հատկապես, պատերազմն Ուկրաինայում կարծես ամբողջովին կլանեց միջազգային հանրության ուշադրությունը՝ միևնույն ժամանակ ստիպելով մարդկանց վերանայել և վերաիմաստավորել իրենց վերաբերմունքը խաղաղության, անվտանգության և մարդու իրավունքների գաղափարների նկատմամբ: **Միաժամանակ, աշխարհաքաղաքական նման զարգացումները շատերի մոտ հաստատեցին տարածված «ուժն է ծնում իրավունք» պատկերացումը. մոտեցում, որը լեգիտիմացնում է բռնության անխուսափելիությունն ու ուժեղագույնի «իրավունքը» և կասկածի տակ առնում խաղաղ ճանապարհով հակամարտությունների կարգավորման այլընտրանք չունենալու գաղափարը: Պարարտ հող ստեղծվեց ամրապնդելու այն հանրային խոսույթները, որոնք դիտարկում են անվտանգությունը, ժողովրդավարությունն ու մարդու իրավունքները որպես միմյանց բացառող հասկացություններ:**

2021-2022 թթ. ընթացքում մեր կազմակերպության գործունեության հետագիծն առավել ընդհանրական նկարագրելու համար բավական է նշել միայն, որ մեր առաջնահերթությունները պայմանավորված են եղել հենց վերոնշյալ մարտահրավերներին դիմակայելու համար գործուն մոտեցումներ մշակելու անհրաժեշտությամբ: Փորձել ենք մի կողմից մեր բոլոր ծրագրերի շահառուների համար տեսանելի և ընկալելի դարձնել նոր ձևավորվող անվտանգային ճարտարապետության կերտման ճանապարհին խաղաղության, ժողովրդավարության և մարդու իրավունքների միջև գոյություն ունեցող անքակտելի փախկապակցվածությունը, մյուս կողմից ջանացել ենք լուծումներ գտնել պատերազմի հետևանքով առաջացած խնդիրներին և չեզոքացնել վերոնշյալ

արժեքների նկատմամբ հակամարտող հասարակություններում օրեցօր աճող թերահավատությունը:

Վերոնշյալ իրավիճակն է պարտադրել նաև, որ 2021-2022 թթ. ընթացքում արդեն կազմակերպության այցեքարտը հանդիսացող տարածաշրջանում հարատև խաղաղության հաստատմանն ուղղված ծրագրերին զուգահեռ, մեր տեղական և միջազգային գործընկերների հետ համագործակցությամբ իրականացրել ենք բազմաթիվ նախաձեռնություններ՝ ուղղված անվտանգային ոլորտի ժողովրդավարական բարեփոխումներին և պաշտպանական ոլորտում մարդու իրավունքների իրավիճակի բարելավմանը:

Նախորդ երկու տարիների ընթացքում կազմակերպել ենք բազմաթիվ տեղական և տարածաշրջանային համաժողովներ և քննարկումներ՝ փորձելով ձևավորել երկխոսության հարթակներ նոր իրականության մեջ ի հայտ եկած մարտահրավերներին համատեղ լուծումներ գտնելու նպատակով: Զուգահեռաբար իրականացրել ենք վերապատրաստման դասընթացներ և սեմինարներ՝ նպատակ ունենալով հանրային պահանջարկ ձևավորել խաղաղության, ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված գործունեության վերաբերյալ և զարգացնել վերոնշյալ ոլորտներում գործող անհատների և կազմակերպությունների ներուժը:

Ավարտելով խոսքս՝ ցանկանում եմ հայտնել լիակատար համոզվածությունս առ այն, որ «Խաղաղության երկխոսության» գործընկերների և համախոհների աջակցությամբ ու համագործակցությամբ, հաշվի առնելով մեր գործունեության ընթացքում ձեռք բերած փորձը և քաղված դասերը, գալիք տարիների ընթացքում էլ հետևողականորեն փորձելու ենք մշակել նոր մոտեցումներ, որոնք կօգնեն մեզ խթանել ժողովրդավարական արժեքների տարածումը, մարդու իրավունքների պաշտպանությունը, ինչպես նաև հակամարտության արդյունքում տուժածների շահերի պաշտպանությունը՝ միևնույն ժամանակ փորձելով վերականգնել պատերազմում ներգրավված հասարակությունների ներկայացուցիչների միջև երկխոսության հնարավորություններն ու փոխվստահությունը:

ԹԵՄԱՏԻԿ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մարդու իրավունքների և ժողովրդավարական արժեքների նկատմամբ հարգանքի ամրապնդում

Խաղաղության շարժման ձևավորման և խաղաղության մշակույթի տարածման խթանում

Տեղական համայնքների ներգրավում և հզորացում

Ներգրավվածության մակարդակներ

- Միջազգային
- Տարածաշրջանային
- Տեղական

ՏԵՍԼԱԿԱՆ

Արդարություն և օրենքի գերակայություն խաղաղ և ժողովրդավարական հասարակությունների համար

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

Նպաստել մարդու իրավունքների պաշտպանությանը; ձևավորել բազմաշերտ երկխոսություն և խաղաղության մշակույթ; կառուցել ժողովրդավարություն և ժողովրդավարական կառույցներ հակամարտությունից տուժած և հետկոնֆլիկտային հասարակություններում





ՄԵԹՈԴՆԵՐԸ

Մարդու իրավունքների մշտադիտարկում | իրավական խորհրդատվության տրամադրում | ջատագովություն և լոբբինգ | քաղաքականության մշակում | մեդիա աշխատանք | փորձի փոխանակում |հետազոտություններ և վերլուծություններ | հմտությունների ձևավորում | ցանցերի ստեղծում...

2021-2022 ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 2021-2022 ԾՐԱԳՐԵՐԸ

ՏԵՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ ԵՒ ՀԶՈՐԱՑՈՒՄ

ԿԱԶՄՈՒՄ Է ԲՈԼՈՐ ԾՐԱԳՐԵՐԻ

18%

42

ՄԱՍՆԱԿԻՑ

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՁԵՒԱՎՈՐՈՒՄ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՐԱԾՈՒՄ

ԿԱԶՄՈՒՄ Է ԲՈԼՈՐ ԾՐԱԳՐԵՐԻ

36%

385

ՄԱՍՆԱԿԻՑ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԳԱՆՔԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ

ԿԱԶՄՈՒՄ Է ԲՈԼՈՐ ԾՐԱԳՐԵՐԻ

46%

1766

ՄԱՍՆԱԿԻՑ

2021-2022 ԾՐԱԳՐԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

19
ԿԼՈՐ ՍԵՂԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

23
ԴԱՍԸՆԹԱՑ/ՍԵՄԻՆԱՐ

489
ՄԱՍՆԱԿԻՑ

5
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ/ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

1622
ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐԻ ՀԵՏ

82
ԻՐԱՎԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

5
ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

3
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ

ՀՈՎԱՆԱՎՈՐՆԵՐԸ ԵՒ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԸ



ԲԵԼԳԻԱ

- Եվրոպական միություն (EU)
- Հանուն ժողովրդավարության եվրոպական հիմնադրամ (EED)

ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐ

- Անվտանգության հետազոտությունների եվրոպական կենտրոն (CESS)

ՖԻՆԼԱՆԴԻԱ

- Ճգնաժամային կառավարման նախաձեռնություն (CMI)

ՖՐԱՆՍԻԱ

- «Une Terre Culturelle» ասոցացիա

ՇՎԵՅՑԱՐԻԱ

- Անվտանգության ոլորտի կառավարման կենտրոն (DCAF)

ՀԱՅԱՍՏԱՆ

- Բաց հասարակության հիմնադրամներ (OSF)
- Հայաստանում Գերմանիայի դաշնային հանրապետության դեսպանություն
- Նիդերլանդների դեսպանություն
- Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր (UNDP)

ԳԵՐՄԱՆԻԱ

- Գերմանիայի արտաքին գործերի նախարարություն
- Արտաքին հարաբերությունների ինստիտուտ (ifa)
- «zivik» դրամաշնորհային ծրագիր
- Էրազմուս+
- Ֆրանս-գերմանական երիտասարդական կազմակերպություն (FGYO)
- «ՕՎԵՆ» հկ (OWEN - Mobile Akademie für Geschlechterdemokratie und Friedensförderung e.V.)
- «Պանգերա» հկ
- «Կլուբհաուզ» երիտասարդական կենտրոն

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ

- «Հաշտեցման ռեսուրսներ» հկ (CR)
- «Սիգրիդ Ռաուզինգ Թրասթ» հիմնադրամ (SRT)

ՀԱԿԻՐՃ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ
2021-2022 ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԳԱՆՔԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԳԱՆՔԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ

1. Քաղաքացիական հասարակության ներուժի զարգացումը Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրի շրջանակներում ՀՀ պաշտպանության նախարարության գործողությունների արդյունավետ մշտադիտարկման նպատակով

2. Պաշտպանական ոլորտում մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված պետական քաղաքականության մշակման և իրականացման գործում քաղաքացիական հասարակության մասնակցության խթանումը

3. Ժամկետային զինծառայողների իրավունքների տարածաշրջանային փոխանակման մեխանիզմի աջակցություն

4. 44-օրյա պատերազմի ընթացքում մարդու իրավունքների խախտման դեպքերի փաստագրում

5. Անվտանգային ոլորտի մասնակցային վերահսկողության զարգացումը

1. Քաղաքացիական հասարակության ներուժի զարգացումը Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրի շրջանակներում ՀՀ պաշտպանության նախարարության գործողությունների արդյունավետ մշտադիտարկման նպատակով

Ծրագրի տևողությունը՝ 12 ամիս
Բյուջեն՝ 14.311.000,00 դրամ (+/- 34.236,84 եվրո)
Հովանավորը՝ Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան

Ծրագրի շրջանակներում կազմակերպությունը ջանքեր է գործադրել ընդլայնելու զինված ուժերում մարդու իրավունքների ոլորտում պետական քաղաքականության մշակման և իրականացման գործում քաղաքացիական հասարակության դերն ու կարևորությունը:

2. Պաշտպանական ոլորտում մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված պետական քաղաքականության մշակման և իրականացման գործում քաղաքացիական հասարակության մասնակցության խթանումը

Ծրագրի տևողությունը՝ 15 ամիս (ընթացիկ)
Բյուջեն՝ 20.457.250,00 դրամ (+/- 47.300,00 եվրո)
Հովանավորը՝ Հանուն ժողովրդավարության եվրոպական հիմնադրամ

Այս նախաձեռնությամբ «Խաղաղության երկխոսություն» հկ-ն ձգտում է խթանել պաշտպանական ոլորտում մարդու իրավունքների իրավիճակը բարելավելու նպատակով կառավարության գործադրած ջանքերը: Կազմակերպությունը նպատակ ունի ապահովել մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ ՀՀ պետական ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագրերի իրականացման մշտադիտարկման գործում քաղաքացիական հասարակության կայուն ներգրավվածություն: Բացի այդ, «Խաղաղության երկխոսություն» հկ-ն նպատակ ունի մշակել փաստահեն առաջարկություններ՝ ուղղված ԱԺ-ի, պետական կառույցների և դրանց առնչվող տեղական և միջազգային հաստատությունների աշխատանքի արդյունավետությունը բարելավվելուն: Ծրագրի շրջանակներում թիմը հարցազրույց է անցկացրել ավելի քան 700 ժամկետային զինծառայողների և 120 նախկին զինծառայողների հետ, որոնց մեծ մասը ԶՈՒ-ում ծառայել են վերջին 5 տարիների ընթացքում: Բացի այդ, հարցազրույցի մասնակիցների զգալի մասն իր մասնակցությունն է ունեցել նաև 44-օրյա պատերազմի ռազմական գործողություններին:

«... Կային երկու զինծառայողներ, ում մենք ոչ՛ ճնշել ենք, ոչ՛ բռնացել: Երբ սպան ասում էր, որ պետք է որևէ բան անել, նրանք առանց ավելորդ հարցերի կատարում էին հրամանը: Նրանք մյուսներից առանձին էին ծառայում, բայց միևնույն ժամանակ, եթե գործ կար անելու, հասկանում էին, որ պետք է անել: Բայց մենք նրանց ծեծի չենք ենթարկել...»

Հատված ծրագրի շրջանակներում իրականացված հարցազրույցներից մեկից

3. Ժամկետային զինծառայողների իրավունքների տարածաշրջանային փոխանակման մեխանիզմի աջակցություն

Ծրագրի տևողությունը՝ 6 ամիս
Բյուջեն՝ 1.822.500,00 դրամ (+/-4.500,00 եվրո)
Հովանավորը՝ Ժնևի Անվտանգության ոլորտի կառավարման կենտրոն (DCAF)

Ծրագրի նպատակն էր մշակել տարածաշրջանային ստանդարտացված մոտեցում՝ պարտադիր զինվորական ծառայության ընթացքում զինծառայողների իրավունքների պաշտպանվածության մակարդակը բացահայտելու նպատակով:

4. 44-օրյա պատերազմի ընթացքում մարդու իրավունքների խախտման դեպքերի փաստագրում

Ծրագրի տևողությունը՝ 6 ամիս
Բյուջեն՝ 4.433.000,00 դրամ (+/-7.150,00 եվրո)
Գործընկերը՝ «Հաշտեցման ռեսուրսներ» հկ
Հովանավորը՝ SIGRID RAUSING TRUST

Ծրագիրն ուղղված էր 44-օրյա պատերազմի ընթացքում թշնամական գործողությունների իրականացման և դրանց ազդեցության վերաբերյալ հիմնական տեղեկատվության բացակայությանը: Փաստագրվել են միջազգային մարդասիրական իրավունքի և միջազգային մարդու իրավունքների խախտումների դեպքերը նկարագրող 247 տեսանյութեր և լուսանկարներ:

5. Անվտանգային ոլորտի մասնակցային վերահսկողության զարգացումը

Ծրագրի տևողությունը՝ 24 ամիս (ընթացիկ)
Բյուջեն՝ 3.037.500.00 դրամ (+/-7.500,00 եվրո)
Գործընկերը՝ Անվտանգության հետազոտությունների եվրոպական կենտրոն
Հովանավորը՝ Հայաստանում Նիդերլանդների Թագավորության դեսպանություն

Ծրագրի նպատակն է Հայաստանում զարգացնել անվտանգային ոլորտի արդյունավետ և մասնակցային վերահսկողությունը: Ծրագիրը կազմված է փորձագիտական մի շարք քննարկումներից՝ ուղղված անվտանգության ոլորտի կարևորագույն խնդիրների վերաբերյալ շահագրգիռ կողմերի միջև խորհրդատվությունների իրականացմանը:

Ընդհանուր առմամբ, ծրագրի իրականացման ընթացքում վերոնշյալ միջոցառումներին մասնակցել են ԱԺ-ի, Ազգային անվտանգության խորհրդի, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի և Պաշտպանության նախարարության 35 ներկայացուցիչներ, ինչպես նաև քաղաքացիական հասարակության կազմակերպությունների այլ ներկայացուցիչներ:

ՀԱԿԻՐՃ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ
2021-2022 ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՁԵՒԱՎՈՐՄԱՆ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԽԹԱՆՈՒՄ

1. Կոնտակտ 2.0
2. Բաց պատմություններ
3. Հայ-ադրբեջանական հակամարտության արխիվներ (Պատերազմի իրական դեմքը. բանավոր պատմությունների նախաձեռնություն)
4. Քաղաքացիական հասարակություն. Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ լուծման վերաբերյալ խորհրդարանական երկխոսություն

1. Կոնտակտ 2.0

Ծրագրի տևողությունը՝ 12 ամիս
Բյուջեն՝ 19.585.413.31 դրամ (+/-32.269,11 եվրո)
Գործընկերը՝ «ՕՎԵՆ» հկ
Հովանավորը՝ Գերմանիայի Դաշնության Արտաքին մշակութային կապերի ինստիտուտի (ifa) «zivik» ծրագիր, Գերմանիայի Արտաքին գործերի նախարարություն

Ծրագիրն ուղղված էր խաղաղ գործընթացների խթանմանը ԼՂ հակամարտությունում ներգրավված հասարակություններում երիտասարդների տեղական խաղաղասիրական ներուժը բացահայտելու, հզորացնելու և մոբիլիզացնելու միջոցով:

«...Երբեմն շոկային էր, երբեմն էլ հաճելի ու դժվար էր լսել հայ պատանիների ու երիտասարդների կարծիքները: Ես բացահայտեցի մի շարք գաղափարներ բռնության մասին և թե ինչպես են դրանք ընկալվում նրանց կողմից: Ընդհանուր առմամբ, մենք հանգեցինք այն մտքին, որ հենց մենք ենք բռնության հիմքը և միևնույն ժամանակ դրա զոհը...»

Կոնտակտ 2.0 ծրագրի երիտասարդ մասնակից

2. Բաց պատմություններ

Ծրագրի տևողությունը՝ 27 ամիս
Բյուջեն՝ 81.979.391.00 դրամ (+/-155.965,00 եվրո)
Գործընկերը՝ «Հաշտեցման ռեսուրսներ» հկ
Հովանավորը՝ Եվրոպական Միություն

Ծրագրի նպատակն էր խթանել ԼՂ և հայ-ադրբեջանական հակամարտության հետևանքով, մասնավորապես՝ 2020թ.-ի 44-օրյա պատերազմի արդյունքում ձևավորված նոր իրականությունում անվտանգության, մարդու իրավունքների պաշտպանության և ժողովրդավարության մարտահրավերների հաղթահարման հնարավոր ճանապարհների վերաբերյալ հանրային խոսույթի ձևավորումը՝ հանրային տարբեր խմբերի շրջանում անցյալի և ներկայի դասերի քննադատական ու ինքնաքննադատական վերլուծության հիման վրա: Բացի այդ, ծրագրի կարևորագույն բաղադրիչներից էր հանդիսանում հակամարտության և խաղաղության վերաբերյալ լայն տարածում ունեցող պատմույթների վերհանումը, դրանց այլընտրանքային մոտեցումների մշակումը, որը կնպաստի հակամարտության մեջ ներգրավված հասարակություններին հետագա հաշտեցման նախապատրաստմանը:

«...Չնայած որ հիմնախնդիրների վերջնական և երկարաժամկետ լուծումները գտնվում են քաղաքական որոշումների ընդունման հարթության վրա, այնուամենայնիվ չի կարելի անտեսել քաղաքացիական հասարակության մակարդակում նման զգայուն հարցերի շուրջ առողջ բանավեճի ձևավորման կարևորությունը...»

Սիլվիա Զեհե, Հարավային Կովկասում և Վրաստանի ճգնաժամի հարցերով Եվրոպական միության հատուկ ներկայացուցչի քաղաքական խորհրդատու

3. Հայ-ադրբեջանական հակամարտությանարխիվ (Պատերազմի իրական դեմքը. Բանավոր պատմությունների նախաձեռնություն)

Ծրագրի տևողությունը՝ 12 ամիս
Բյուջեն՝ 14.470.819.20 դրամ (+/-35.040,00 եվրո)
Գործընկերը՝ «Հաշտեցման ռեսուրսներ» հկ
Հովանավորը՝ «Սիգրիդ Ռաուզինգ Թրասթ» հիմնադրամ

Ծրագրի նպատակն է հավաքագրել 2020թ.-ի հայ-ադրբեջանական պատերազմի հետևանքները կրող անձանց պատմությունները: Վերջիններիս հիման վրա կստեղծվի արխիվ, որը կարտացոլի պատերազմի միջով անցած մարդկանց մոտեցումները և պատերազմի վերաբերյալ ունեցած ընկալումները, մասնավորապես՝ հայթայթելով այն նյութերը, որոնք այլ աղբյուրներում հասանելի չեն: Բացի կարևոր պատմական հիշողությունները պահպանելը, «Խաղաղության երկխոսությունը» նպատակ ունի օգտագործել հարցազրույցի որոշ նյութերը պատերազմի և խաղաղության վերաբերյալ հանրային քննարկումներ ծավալելու համար:

4. Քաղաքացիական հասարակություն. Խորհրդարանական երկխոսություն Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը խաղաղ կարգավորման վերաբերյալ

Ծրագրի տևողությունը՝ 12 ամիս
Բյուջեն՝ 2.025.000.00 դրամ (+/-5.000,00 եվրո)
Գործընկերը՝ Մարտի Ահտիսաարի անվան խաղաղության հիմնադրամ
Հովանավորը՝ Եվրոպական Միություն

Ծրագրի նպատակն էր քաղաքացիական հասարակության և խորհրդարանական գործիչների համար ստեղծել նոր հարթակ, որը հնարավորություն կտա անդրադառնալ հետպատերազմական մարտահրավերների լուծման ուղիներին և խթանել նոր ռազմավարություններ՝ ուղղված հայ-ադրբեջանական հակամարտության համատեքստում վտանգների նվազեցմանը:

ՀԱԿԻՐՃ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ 2021-2022 ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

ՏԵՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ ԵՒ ՀԶՈՐԱՑՈՒՄ

ՏԵՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ ԵՒ ՀԶՈՐԱՑՈՒՄ

1. «Լրագրությունն առանց սահմանների» միջմշակութային փոխանակում

2.Հակամարտության կարգավորման այլընտրանքային մեխանիզմներ

1. «Լրագրությունն առանց սահմանների» միջմշակութային փոխանակում

Ծրագրի տևողությունը՝ 7 ամիս
Ծրագրի բյուջեն չի կառավարվել «ԽԵ»-ի կողմից:
Գործընկերները՝ «Մշակութային երկիր» ասոցացիա «Պանգերա» ԿԿ
«Կլուբհաուզ» երիտասարդական կենտրոն
Հովանավորը՝ Ֆրանս-գերմանական Երիտասարդական գրասենյակ, Էրազմուս+

Ծրագրի նպատակն էր Հայաստանը, Ֆրանսիան և Գերմանիան ներկայացնող երիտասարդ մասնակիցներին ծանոթացնել ժամանակակից լրագրության և սոցիալական մեդիայի գործիքներին, ձևավորել ոլորտային հմտություններ, ստեղծել նոր ծանոթություններ, ինչպես նաև ապահովել այդ երկրներին հատուկ մշակութային առանձնահատկությունների փոխանակում: Ծրագիրն իրականացվել է երեք մեկշաբաթյա տևողությամբ փուլով, որոնք անց են կացվել ծրագրային երեք երկրներից յուրաքանչյուրում:

2. Հակամարտության կարգավորման այլընտրանքային մեխանիզմներ

Ծրագրի տևողությունը՝ 6 ամիս
Բյուջեն՝ 3.136.000,00 դրամ (+/-8000,00 դոլար)
Հովանավորը՝ ՄԱԿ-ի զարգացման ծրագիր

Ծրագրի նպատակն էր Հայաստանի հյուսիսային մարզերը ներկայացնող երիտասարդների շրջանում ձևավորել հակամարտությունների հետ աշխատանքի կառուցողական մոտեցում և ծանոթացնել նրանց հակամարտությունների կարգավորման մի շարք արդյունավետ գործիքների: «Խաղաղության երկխոսություն» ԿԿ-ն դասընթացի համար մշակել է մտացածին պատմություններ, որոնք ներկայացվել են ծրագրի մասնակիցներին առանց դրանց վերջաբանի: Անավարտ պատմություններ ներկայացնելու նպատակն էր խթանել քննադատական մտածողությունը և մասնակիցներին հնարավորություն տալ առաջարկել անհատական լուծումներ՝ հիմնվելով արդեն իսկ քննարկված տեղեկության և ենթադրությունների վրա, ինչպես նաև կապող հանգամանքներ գտնել հորինված պատմությունների և իրական իրադարձությունների միջև: Ծրագրին հաջորդեց ձեռնարկի մշակումը, որն իր մեջ ամփոփում է դասընթացի ժամանակ քննարկված պատմությունները վերլուծելու համար գործածված տեխնիկան, գործիքակազմը և օգտագործված մեթոդաբանությունը: Ձեռնարկը հրապարակվել է «Սիգրիդ Ռաուզինգ Թրաստ» հիմնադրամի աջակցությամբ:

«...Դասընթացն ինձ օգնեց արագ և արդյունավետ վերլուծել կոնֆլիկտային իրավիճակները և հասկանալ դրանց հիմքային պատճառները...»

Ինեսսա Թումանյան,
16 տարեկան, ք. Վանաձոր

«Ինձ համար այս դասընթացն անչափ օգտակար էր: Ես սովորեցի՝ ինչպես արդյունավետ կերպով կարգավորել կոնֆլիկտները, դրանցից խուսափելու փոխարեն...»

Արարատ Սարուխանյան,
16 տարեկան, գ. Մարգահովիտ

2021-2022ԹԹ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ» ՀԿ-Ի ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ 2021Թ. ԴՐՈՒԹՅԱՄԲ

N	Եկամուտները և փաստացի ծախսերը (ՀՀ դրամ)	Ընդհանուր եկամուտ (ՀՀ դրամ)	Փաստացի ծախսեր (ՀՀ դրամ)	Ընդհանուր մնացորդը (ՀՀ դրամ)
1	Աշխատակազմի և ծրագրային թիմի աշխատավարձեր	26 139 350,14	27 482 363,79	-1 343 013,65
2	Պայմանագային աշխատանք և փորձագետներ	7 047 779,49	13 317 757,35	-6 269 977,86
3	Գրասենյակի վարձակալություն	3 040 272,00	3 145 282,62	-105 010,62
4	Դասընթացների և կոնֆերանսներ (տարածքի վարձակալություն, սնունդ, կացություն)	14 542 936,56	17 024 257,28	-2 481 320,72
5	Ճանապարհածախս	4 046 764,54	4 827 237,94	-780 473,40
6	Նյութեր, հաղորդակցություն, բանկային ծախսեր	1 769 507,71	2 286 636,57	-517 128,86
7	Կայքի սպասարկում / առցանց և անցանց հրապարակումներ	601 977,44	522 984,44	78 993,00
8	Ծրագրերի մոնիտորինգ և գնահատում	300 000,00	330 000,00	-30 000,00
	Ընդամենը՝	57 488 587,88	68 936 519,98	-11 447 932,11



«ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ» ՀԿ-Ի ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ 2022Թ. ԴՐՈՒԹՅԱՄԲ

N	Եկամուտները և փաստացի ծախսերը (ՀՀ դրամ)	Ընդհանուր եկամուտ (ՀՀ դրամ)	Փաստացի ծախսեր (ՀՀ դրամ)	Ընդհանուր մնացորդը (ՀՀ դրամ)
1	Աշխատակազմի և ծրագրային թիմի աշխատավարձեր	28 445 652,19	28 425 682,19	19 970,00
2	Պայմանագային աշխատանք և փորձագետներ	23 999 611,13	23 849 430,33	150 180,80
3	Գրասենյակի վարձակալություն	2 544 925,51	2 541 455,51	3 470,00
4	Դասընթացների և կոնֆերանսներ (տարածքի վարձակալություն, սնունդ, կացություն)	20 180 952,54	20 039 979,79	140 972,75
5	Ճանապարհածախս	3 702 064,74	3 833 763,94	-131 699,20
6	Նյութեր, հաղորդակցություն, բանկային ծախսեր	1 586 426,42	1 509 562,58	76 863,84
7	Կայքի սպասարկում / առցանց և անցանց հրապարակումներ	347 949,16	455 717,06	-107 767,90
8	Ծրագրերի մոնիտորինգ և գնահատում	0,00	0,00	0,00
	Ընդամենը՝	80 807 581,70	80 655 591,40	151 990,29



1. Աշխատակազմի և ծրագրային թիմի աշխատավարձեր
2. Պայմանագային աշխատանք և փորձագետներ
3. Գրասենյակի վարձակալություն
4. Դասընթացների և կոնֆերանսներ (տարածքի վարձակալություն, սնունդ, կացություն)
5. Ճանապարհածախս
6. Նյութեր, հաղորդակցություն, բանկային ծախսեր
7. Կայքի սպասարկում /առցանց և անցանց հրապարակումներ
8. Ծրագրերի մոնիտորինգ և գնահատում

ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԹԻՄԸ 2021-2022

«Խաղաղության երկխոսություն» հկ-ի գործունեության հաջողությունն ապահովվում է ի շնորհիվ իր թիմի, խորհրդատուների և կամավորների փորձառության ու նվիրվածության: 2021-2022թթ. ընթացքում թիմում աշխատել են 8 փորձագետներ, ովքեր մասնագիտացված են մարդու իրավունքների մշտադիտարկման, ծրագրերի կառավարման և հակամարտությունների կարգավորման ուղղություններով:

Թիմը քաջատեղյակ է Հարավային Կովկասում վերջին ժամանակներս տիրող իրադրությունից, ինչպես նաև օժտված է խաղաղասիրական աշխատանքին ուղղված նորարարական մոտեցումների գործնական փորձով և հակամարտության հետևանքով տուժած համայնքներում արդյունավետ աշխատելու գործնական հմտություններով:

Էդգար Խաչատրյան

«Խաղաղության երկխոսություն» հկ-ի հիմնադիր և նախագահ

Մարիաննա Խաժակյան

Խաղաղասիրական և գենդերային ծրագրերի բաժնի մասնագետ

Անահիտ Եգորյան

Հաշվապահ

Արթուր Սուքիասյան

Փաստաբան

Աննա Զուրաբյան

Մեդիայի և հանրային կապերի բաժնի համակարգող

Անուշ Հարությունյան

Մարդու իրավունքների ծրագրերի բաժնի մասնագետ

Անի Հարությունյան

Անվտանգային ոլորտի բարեփոխումների / պաշտպանության վերահսկողության ոլորտի փորձագետ-խորհրդատու

Արմինե Զաքարյան

Անցյալի վերաբերյալ աշխատանքի և անցումային արդարադատության ոլորտի փորձագետ-խորհրդատու

2022թ. Հայաստանում պաշտպանական ոլորտի արդյունավետ կառավարումը և վերահսկողությունը. կլոր սեղան-քննարկում/ DCAF, «Խաղաղության երկխոսություն» հկ

2021թ.՝ Պաշտպանական ոլորտում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ռազմավարությունից բխող 2020-2022 թթ. գործողությունների ծրագրի իրականացման առկա խնդիրները և դրանց լուծման ուղիները. հանրային քննարկում

2021թ.՝ Անվտանգային ոլորտի մասնակցային վերահսկողության զարգացումը Հայաստանում / Անվտանգության հետազոտությունների եվրոպական կենտրոն և «Խաղաղության երկխոսություն» հկ

2022թ.՝ «Լրագրությունն առանց սահմանների» փոխանակման ծրագրի բեռլինյան փուլ

2021թ.՝ Բաց պատմություններ. Ղարաբաղյան հակամարտության սոցիալական և քաղաքական ազդեցությունների վերաբերյալ հանրային քննարկումների խթանում

2021թ.՝ «Պատմությունը և ես». դասընթաց երիտասարդների համար